

Ա. Խաչատրյան-----

ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N-----

(Ֆիզիկական անձանց համար)

ք.Երևան

ամիս, ամսաթիվ

«Գլաձոր ՈՒՎԿ» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս գործադիր տնօրեն Ա.Դարբինյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պարտատեր», մի կողմից, քաղաքացի -----յանը, ՀՀ անձնագիր----- տրված -----
---- 200-թ 000-ի կողմից, բնակվող----- հասցեում, մի կողմից, այսուհետ՝ «Երաշխավոր» և ----- սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, գտնվող՝ ----- հասցեում, ի դեմս տնօրեն -----յանի, որը գործում է ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Պարտապան», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Երաշխավորը պարտավորվում է Պարտատիրոջ առջև համապարտ պատասխանատվություն կրել Պարտատիրոջ և Պարտապանի միջև ----- թվականին կնքված թիվ ----- վարկային պայմանագրով, այսուհետ՝ վարկային պայմանագիր, տարեկան ----(----)% տոկոսադրույքով,----- (----) օր ժամկետով՝ մինչև 20--(Երկու հազար-----) թվականի օգոստոսի --(----)-ը մարման պայմանով Պարտապանին տրամադրված ----- (----) ԱՄՆ դոլար գումարի վերադարձման, տոկոսներ վճարելու և վարկային պայմանագրով նախատեսված այլ վճարումներ կատարելու Պարտապանի ստանձնած պարտավորությունների լրիվ և պատշաճ կատարման համար:

2. Կողմերի պարտականությունները

2.1. Երաշխավորը պարտավորվում է Պարտատիրոջ առջև համապարտ պատասխանատվություն կրել սույն պայմանագրի 1.1. կետում նշված Պարտապանի վարկային պարտավորությունների կատարման համար նույն ծավալով, ինչ Պարտապանը՝ ներառյալ վարկի, տոկոսագումարների և տուժանքների վճարելը, պարտքը բռնագանձելու կապակցությամբ դատական, աճուրդային ծախսերը և Պարտապանի կողմից պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով առաջացած Պարտատիրոջ այլ վնասները:

2.2. Երաշխավորը պարտավորվում է սույն պայմանագրի 1.1. կետում նշված վարկային պայմանագրով սահմանված վճարման ժամկետները սկսելու պահից, Պարտապանի կողմից վճարումները չկատարելու դեպքում, Պարտատիրոջը Երեք աշխատանքային օրվա ընթացքում վճարել վարկային պայմանագրով Պարտապանի չվճարված գումարները, ինչպես նաև վարկային պայմանագրով նախատեսված գրավի բռնագանձման հետ կապված ծախսերը, տուժանքներն ու այլ վնասները:

2.3. Երաշխավորի կողմից սույն պայմանագրի 2.2 կետով ստանձնած պարտավորությունները չկատարելու դեպքում, Պարտատերն իրավունք ունի դիմել Առևտրային արբիտրաժին:

2.4. Պարտատերը պարտավոր է Երաշխավորին հանձնել Պարտապանի հանդեպ ունեցած իր պահանջները հավաստող փաստաթղթերը և փոխանցել այդ պահանջն ապահովող իրավունքները՝ սույն պայմանագրի 2.2 կետում նշված պարտավորությունները Երաշխավորի կողմից կատարելու պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ լրացուցիչ կնքվելիք պահանջի փոխանցման պայմանագրով:

3. Ժամկետները

3.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից:

3.2. Սույն պայմանագիրը դադարում է Պարտապանի կողմից 1.1 կետում նշված վարկային պայմանագրով կամ Երաշխավորի կողմից սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների լրիվ և պատշաճ կատարմամբ:

4. Լրագուցիչ պայմաններ

4.1. Պարտապանը պարտավոր է Երաշխավորին հանձնել սույն պայմանագրի 1.1. կետում նշված պայմանագրի մեկ օրինակը, որը կցվում է:

4.2. Կողմերը սույն Պայմանագրից կամ նրա կապակցությամբ ծագած վեճերի լուծումը հանձնում են առևտրային արբիտրաժին, որը ձևավորել են փոխադարձ համաձայնությամբ: Կողմերն արբիտրաժային տրիբունալ են ձևավորել մեկ հոգանոց կազմով և տրիբունալի միակ անդամ են նշանակել Կարեն Մելքոնյանին (անձնագիր՝ AK0411434, տրված 15.12.2009թ. 009-ի կողմից): Վեճի էության նկատմամբ կիրառելի են ՀՀ օրենսդրության նյութական իրավունքի նորմերը, իսկ դատավարական ընթացակարգը սահմանում է տրիբունալը:

Պարտատիրոջն իրավունք է վերապահվում վեճերի լուծումը փոխանցել առաջին աստյանի ընդհանուր իրավասության դատարան:

4.3.Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով 3 (երեք) օրինակից, յուրաքանչյուր կողմին մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանների և ստորագրությունների

ՊԱՐՏԱՏԵՐ

«Գլաձոր ՈՒՎԿ» ՓԲԸ
ք.Երևան 25 Չարենցի փ.1բ.42

հեռ. 55-15-15
Գործադիր տնօրեն`

_____ Ա.Դարբինյան

Կ.Տ.

ԵՐԱՇԽԱՎՈՐ

----- յան

Անձնագիր
Հասցեն

(ձեռագրով Ա.Ա. և ստորագրություն)

ՊԱՐՏԱՊԱՆ

----- ՍՊԸ

Հասցե
ՀՎՀՀ

Տնօրեն

Կ.Տ.